# 1983

# Զարթօնք Օրացոյց

տեսակետներն տարբեր խնդիրների շուրջ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաղաղության մասին ասել է. «Հայ. Առաքելական Եկեղեցին միշտ աղոթել է ու գործել ի խնդիր աշխարհի խաղաղության եւ ի խնդիր իր հարազատ ժողովրդի խաղաղ ու ապահով կյանքի պահպանման... Մենք հայերս եղեռն տեսած ժողովուրդ ենք եւ չենք կամենում պատերազմ ոչ մի գնով»:

Հարցազրույցի մի ուրիշ տեղում Վեհափառ Հայրապետը անդրադարձել է ուրիշ մասում անդրադառնալով Իրանի իրադարձություններին, նշել է. «Հայաստանը եւ Իրանը դրացի ու բարեկամ երկրներ են, որոնց խաղաղ դրացիությունը մեր ամենօրյա աղոթքն է: Որով մենք ենք ի սրտե փափագող, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը, որ մի նոր էջ բացեց իրանական մեծ ազգի բազմադարյան պատմության գրքի մեջ, ընթանա խաղաղության, բարօրության եւ հոգեւոր ու մշակութային ծաղկումի ճանապարհով»:

Նոր Տարին նշում էին աշնան առաջին օրը՝ սեպտեմբերի մեկին, որպես բերքահավաքի ամիս: Հին պարսիկները Նոր Տարվա օրն ընտրել էին գարնան օրահավասարը եւ այն անվանել «վարդի եւ գինու օր»: Այս տոնը հետագայում ընդունվեց մուսուլմանական աշխարհի կողմից եւ ստացավ Նովրուզ անունը: Անգլիայում մինչեւ 1752 թ. Նոր Տարին նշում էին մարտի 26-ին: Հայերի մոտ տարվա առաջին ամիսը օգոստոսն էր եւ կոչվում էր Նավասարդ: Նոր Տարվա սկիզբը հունվարի մեկը համարվեց, երբ 1582 թ. կատարվեց Հուլյան օրացույցի բարեփոխությունը:

# ՆՈՐ ԳՐՔԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՅՐԵՆԻ ԹԵՐԹՈՒՄ

«Հայրենիքի ձայն» թերթը 28 Ապրիլի 1982 թ. համար 18 (874)-ում անդրադարձել է Էդ. Գերմանիկի 2 հատորանոց հայ ժողովրդի պատմության թարգմանությանը:

Հայրենի թերթը այդ մասին գրել է.

«Էդ. Գերմանիկի այս հայրենանվեր աշխատանքը դրվատանքի արժանի գործ է, քանի որ մինչեւ այսօր, ինչպես նշում է թարգմանիչը, հայ ժողովրդի պատմությունը ներկայացնող լիարժեք աշխատություն պարսկերեն լեզվով չի հրատարակվել:

Էդ. Գերմանիկը հարազատ է մնացել բնագրին: Թարգմանությունը կատարված է պարզ ու սահուն լեզվով»:

Անկասկած Է. Գերմանիկի կատարած աշխատանքը մնայուն արժեք է: Անպայման այդ գիրքը լույս կտեսնի անգամներ, որովհետև մինչև հիմա միակ գիր որն է, որ պարսիկ ընթերցողին ծանոթացնում է հայ ժողովրդի պատմության հետ՝ նրա կազմավորման առաջին օրից մինչև մեր օրերը:

Մենք էլ մեր հերթին նորանոր հաջողություններ ենք մաղթում երիտասարդ թարգմանիչին:

## تاریخ ارمنستان

جلد اول

دکتر ک.س. خداوردیان

پرفسور ک.خ. سارکسیان

پرفسور ث.خ. هاکوبیان

پرفسور آ.ک. آبراهامیان

آکادمیسین پرفسور س. ت. یرمیان

آکادمیسین پرفسور م.ک. نرسیسیان

ترجمه ا. گرمانیك